Համաձայնագիր-2
12.01.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/4 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «05» Հոկտեմբեր 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Տ.Ավագյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով 12.01.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/4 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1. Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 21 000 000 (Քսանմեկ միլիոն) ՀՀ դրամով, այն սահմանելով 404 000 000 (Չորս հարյուր չորս միլիոն) ՀՀ դրամ՝ ավելացնելով Պայմանագրի N-1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների ծավալը:
2. Փոփոխել գնման Պայմանագրի N-1 Հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ/կցվում է/:
3. Փոփոխել գնման Պայմանագրում 09.02.2021թ. թիվ-1 համաձայնագրով հաստատված՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ/կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիա բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00228737
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Տ.Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված-1
Հաստատված է
«12» հունվարի 2021թ. կնքված
N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/4
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
						մատուցման
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ժամկետը և հասցեն
1	72261160/526	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայությունների տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	404 000 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

CPV – 72261160/526

ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայություններ

Նպատակը՝
ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի, ենթահամակարգեր, դրանց համալրող միջոցների և ծրագրերի, սերվերային համակարգերի և ցանցերի սպասարկման ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ՝

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 1

Մատուցել ՀՀ ՊԵԿ-ի հարկային մարմնում գործող ստորև նշված էլեկտրոնային կառավարման համակարգերի և դրանց ենթահամակարգերի սպասարկման ծառայություններ՝ ապահովելով դրանց անխափան աշխատանքը՝

- *Հայտնաբերված խնդիրների ուղղում:*
- *Փոփոխություններ սույն տեխնիկական բնութագրին համապատասխան:*
- *Համակարգի օպտիմիզացում:*

Սպասարկվող էլեկտրոնային կառավարման համակարգերի և ենթահամակարգերի ցանկ

«ՀԱՐԿԱՏՈՒ-3» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ-հարթակ, որը հնարավորություն է տալիս ՀՀ ՊԵԿ աշխատակցին, առցանց ռեժիմում, սպասարկել հարկ վճարողին, աշխատել հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկ/հաշվետվություններում առկա տվյալների հետ, իրականացնել համապատասխան վերլուծություններ, վարել անձնական հաշվի քարտ (այսուհետ՝ ԱՀՔ), հավաքագրել եկամուտներ:

Համակարգի ենթահամակրգերն են՝

1. **Փաստաթղթեր-հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնված թղթային հաշվարկ/հաշվետվությունների մուտքագրման, խմբագրման, էլեկտրոնային հաշվարկ/հաշվետվությունների դիտման, հարկային մարմնի կողմից փաստաթղթերի գրանցման հնարավորության ստեղծում:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- Հայտարարագրեր (գրանցամատյան, նոր հայտարարագիր, նոր ստուգման ակտ, մուտքագրել փաստաթուղթ, անավարտ փաստաթուղթ, առցանց գրանցում):
- Վճարումներ (Նոր վճարում, վճարման անդորրագրեր, վճարումներ, միասնական հաշվի շարժ)
- ՀԴՄ (Հսկիչ դրամարկղային մեքենա) ֆիսկալ հասույթ (ՀԴՄ ֆիսկալ հասույթ, նոր ֆիսկալ հասույթ):
- ԱՀՔ (ԱՀՔ (մինչև 31.12.2017), ԱՀՔ (01.01.2018-ից))
- Արտոնագրային վճարի գրանցմատյան:
- Գրքերի գրանցամատյան:
- Դրամարկղային գրքեր:
- Բողոքներ (նոր բողոքներ, բողոքների գրանցամատյան):
- Դիմումների գրանցամատյան:
- ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներ:
- ԵՏՄ գործարքների դարան (ԵՏՄ գործարքների դարան, նոր գործարք):
- Կամերալ ուսումնասիրություններ
- Պետական տուրքի գրանցամատյան
- Միկրոձեռնարկատիրության արտոնագիր

2. **Հաշվետվություններ-հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնված հաշվարկ/հաշվետվություններում առկա տեղեկատվության արտածման հնարավորության ստեղծում՝ ստարնդարտ հաշվետվությունների տեսքով:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են

- Հարկ վճարողների ընդհանուր դարան:
- Ապառքացուցակի հաշվետվություն (Ապառքացուցակի հաշվետվություն մինչև 31.12.2017թ., Ապառքացուցակի հաշվետվություն 01.01.2018թ.-ից հետո):
- Մաքսային տվյալներ:
- ՀԴՄ-ների հաշվետվություններ (տոնավաճառներ, չուղարկված տվյալներ, ՀԴՄ-ի կտրվածքով, ֆիսկալ հասույթ՝ SAM քարտով, ՀԴՄ-ի կտրվածքով՝ SAM քարտով, հասույթ, գնորդի ՀՎՀՀ պարունակող կտրոններ):
- ՏՍԿ-ներ (Տեխնիկական սպասարկման կենտրոններ):
- ԱՀՔ մնացորդը (ԱՀՔ մնացորդը մինչև 31.12.2017թ., ԱՀՔ մնացորդը 01.01.2018թ.-ից հետո):

- Հարկային հաշիվներ:
- Հաշվարկային փաստաթղթեր:
- Տեղեկատվության հաշվետվություն:
- Լիցենզիաներ, թույլտվություններ և ծանուցումներ:
- Երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվություն (Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, շարժական գույքի վերաբերյալ տեղեկատվություն, ստուգումների վերաբերյալ տեղեկատվություն, օդային ուղևորների վերաբերյալ տեղեկատվություն)

3. **<u>Տեղեկատվություն</u>-երրորդ անձանցից ստացվող տեղեկատվության հավաքագրման հնարավորության ստեղծում:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են

- Տեղեկատվության ներմուծում (մաքսային տվյալներ, գանձապետարանի տվյալների ներմուծում, լիցենզիաների և ծանուցումների տվյալների ներմուծում, երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվության ներմուծում):
- Ներմուծման սխալներ
- Վարչական իրավախախտումներ (Վարչական իրավախախտումներ, Նոր խախտում)
- Իրավական վարույթներ (Իրավական վարույթների նախնական ցուցակ, Արգելադրման աշխատանքներ, Արգելադրման աշխատանքների դիտում)
- Հայցերի/գանձման որոշումներ (Նոր հայցի/գանձման որոշման գրանցում, Հայցերի/գանձման որոշումների դիտում)
- Իրավական վարույթներ (Հարկային պարտավորությունների հարկադիր գանձման վարույթներ, Արգելադրման աշխատանքներ, Դատական վարույթներ, Վարչական կարգով բողոքարկումներ, Սնանկության վարույթներ, Քրեական վարույթներ, Լիազորությունների ժամանակավոր փոխանցում):

4. **<u>Կառավարում-</u> հարկ վճարողի հաշվառմանը վերաբերվող ամբողջական տեղեկատվության դիտման, խմբագրման, ծանուցումների ձևավորման և ուղարկման հնարավորության ստեղծում:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- Հարկ վճարողներ:
- ՀԴՄ-ներ (ՀԴՄ-ներ, ՀԴՄ տեսուչներ, ՀԴՄ-ների գրանցում (ժամանակավոր))
- Օբյեկտներ
- Հաշվարկված ապառքացուցակներ
- Հիշեցում-ծանուցումների ենթահամակարգ (սոց՝վճարի ծանուցումների ցանկեր, հիշեցում-ծանուցումների ցանկեր)
- Բոլոր հիշեցում ծանուցումները
- Հարկման ռեժիմներ
- Տվյալների սուբյեկտներ
- Գործարքների մոնիտորինգ (ծանուցումների ուղարկում, ծանուցումների գրանցամատյան)

5. **<u>Սպասարկում</u>-համակարգերից օգտվողների դերերի, համակարգում գործող բառարանների կառավարման հնարավորության ստեղծում:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են

- Օգտվողի տվյալներ
- Դերերի կառավարում
- Բառարաններ (բառարաններ, բառարանների փոփոխությունների պատմություն)
- Առցանց օգտվողներ
- Առցանց լիազորներ

6. **<u>Ռիսկերի գնահատման ենթահամակարգ</u>-ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների գանկերի ձևավորման հնարավորության ստեղծում:**

7. **<u>Ոչ ստանդարտ հաշվետվությունների ենթահամակարգ</u>-հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնված հաշվարկ/հաշվետվություններում առկա տեղեկատվության հիման վրա ոչ ստանդարտ հաշվետվությունների ձևավորման հնարավորության ստեղծում:**

<u>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (file-online)</u>- հարթակ, որը հնարավորություն է ընձեռում հարկ վճարողին, առցանց ռեժիմում, հարկային մարմնին ներկայացնել հաշվարկ/հաշվետվություններ, տեսնել իր հաշվառման, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ստանալ ծանուցումներ և հայտարարություններ:

<u>Համակարգի ենթահամակրգերն են՝</u>

1. **<u>Անձնական գրասենյակ</u>-հարկ վճարողի, որպես օգտվող, վերաբերյալ ամբողջական տեղեկատվության արտացոլման հնարավորության ստեղծում:**

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- Անհատական հաշիվ (անձնագրային տվյալներ)
- Վճարումներ
- Հարկային պարտավորություններ
- Ծանուցումներ
- Հարկ վճարողներ
- Աշխատողներ
- ՀԴՄ-ներ
- Դրոշմանիշեր և դրոշմապիտակներ
- ԵՏՄ գործարքների դարան
- Դրամարկղային գրքեր
- Արտոնագրային հարկ
- Էլեկտրոնային վճարման կարգադրություններ
- Հարկերից ազատման արտոնագիր
- Պետական տուրքի գրանցամատյան
- Միկրոձեռնարկատիրության արտոնագիր:

2. **<u>Հաշվետվություններ</u>-հարկ վճարողի կողմից հարկային մարմնին հանձնվող հավարկ/հաշվետվությունների ձևաչափերի ստեղծում:**
   Ենթահամակարգի ենթաբաժինն է՝
   - Հարկ վճարողների կողմից էլեկտրոնային եղանակով հարկային մարմին հաշվետվությունների ներկայացման ենթահամակարգ:

3. **<u>Դերերի կառավարում</u>- համակարգից օգտվողների դերերի առցանց կառավարում հարկ վճարողի՝ որպես ադմինիստրատորի կողմից:**

<u>ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ</u> - հարթակ, որը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին տպել ՀԴՄ կտրոններ, դուրս գրել հաշվարկային փաստաթղթեր, իսկ ՊԵԿ աշխատակիցներին՝ իրականացնել ՀԴՄ-ից ստացված տվյալների հիման վրա համապատասխան վերլուծական աշխատանքներ:

<u>Համակարգի ենթահամակարգերն են՝</u>

1. ***<u>ՀԴՄ համակարգերի կառավարման «Հարկատու 3» համակարգ- հարկ վճարողի կողմից հակային մարմին հանձնած նոր սերդի ՀԴՄ-ների գրանցման և գնման դիմումների դիտման և մշակման, ինչպես նաև ՀԴՄ ֆիսկալ հասույթների և ՀԴՄ-ներով տպված կտրոնների դիտման հնարավորության ապահովում:</u>***

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- ՀԴՄ-ների գրանցման և գնման դիմումների մշակման ենթահամակարգ:
- ՀԴՄ ֆիսկալ հասույթների դիտման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ներով տպված կտրոնների դիտման ենթահամակարգ:

2. ***Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ (ՀՆԷՀ) - հարկ վճարողի համար «Անձնական գրասենյակից» ՀԴՄ ձեռք բերելու մասին, ՀԴՄ գրանցելու մասին և ՀԴՄ գրանցումից հանելու մասին դիմումների լրացման և հանձնման, ինչպես նաև Անձնական գրասենյակում ՀԴՄ-ների վերահսկման և ՀԴՄ-ներում կիրառվող ապրանքների ցանկերի ստեղծման և կառավարման հնարավորության ապահովում:***

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- Դիմում՝ ՀԴՄ ձեռք բերելու մասին:
- Դիմում՝ ՀԴՄ գրանցելու մասին:
- Դիմում՝ ՀԴՄ գրանցումից հանելու մասին:
- Հարկ վճարողի Անձնական գրասենյակում ՀԴՄ-ների վերահսկման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ներում կիրառվող ապրանքների ցանկերի ստեղծման և կառավարման ենթահամակարգ:

3. ***Տվյալների փոխանակում ՀԴՄ-ների, այդ թվում նաև էլեկտրոնային ՀԴՄ-ների և ՀՀ ՊԵԿ սերվերների միջև- ՀՀ ՊԵԿ-ում ներդրված ՀԴՄ-ների, այդ թվում նաև էլեկտրոնային ՀԴՄ-ների և ՀՀ ՊԵԿ սերվերների միջև տվյալների փոխանակման հնարավորության ստեղծում***

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- ՀԴՄ ծրագրերի թարմացման կառավարման համակարգ:
- ՀԴՄ տվյալների փոխանակման ենթահամակարգ:
- Հարկային հաշիվների և էլեկտրոնային փաստաթղթերի ՀԴՄ-ներով գրանցված տվյալների փոխանակման ենթահամակարգ:
- ՀԴՄ-ի և անկանխիկ վճարումների իրականացման համակարգ ծրագրային փաթեթի միջև տվյալների փոխանակման մոդուլ:

4. ***ՀԴՄ-ների վրա տեղադրվող ծրագրային ապահովման մոդուլներ- ՀԴՄ հիմնական գործողությունների, ՀԴՄ շահագործման կանոնների ստուգման գործողությունների, ՀԴՄ կտրոնների վրա տպվող ապրանքների կառավարման, հարկային հաշիվների ենթածրագրի, ԱԱՀ վերադարձով հարկային հաշիվների, և նույնականացման քարտերով ստորագրման հնարավորության ստեղծում:***

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- ՀԴՄ հիմնական գործողություններ
- ՀԴՄ շահագործման կանոնների ստուգման գործողություններ
- ՀԴՄ կտրոնների վրա տպվող ապրանքների կառավարում
- Հարկային հաշիվների ենթածրագիր
- Հաշվարկային փաստաթղթերի ենթածրագիր
- ԱԱՀ վերադարձով հարկային հաշիվներ
- Նույնականացման քարտերով ստորագրում:

5. ***Առևտրային ծրագրերի հետ ՀԴՄ ծրագրի ինտեգրման ծրագրային ապահովման ենթահամակարգ- ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման վեբ սերվիսի սպասարկման և խորհրդատվության իրականացում առևտրային ծրագրային ապահովում ստեղծող կազմակերպություններին:***

Ենթահամակարգի ենթաբաժիններն են՝

- ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման վեբ սերվիսի սպասարկում և խորհրդատվություն առևտրային ծրագրային ապահովման ստեղծող կազմակերպություններին,
- ՀՀ ՊԵԿ-ի կազմակերպած պարբերական խորհրդատվական հանդիպումների վարում ՀԴՄ ծրագրի արտաքին առևտրային ծրագրի հետ ինտեգրման արդյունավետության բարձրացման նպատակով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ-հարթակ, որը հնարավորություն է ընձեռում հարկ վճարողին, առցանց ռեժիմում, դուրս գրել և/կամ հաստատել հարկային հաշիվներ/հաշվարկային փաստաթղթեր, վարել էլեկտրոնային գրքեր:

Համակարգի ենթաբաժիններն են՝

- Հարկային հաշիվներ
- Հաշվարկային փաստաթղթեր
- ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ
- Էլեկտրոնային գրքեր:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊՈՐՏԱԼ- հարթակ, որը հնարավորություն է տալիս առցանց էլեկտրոնային դիմում ներկայացնել և ստանալ անհատական հաշվի քաղվածք, տեղեկատվություն ստանալ կատարված սոցիալական վճարների մասին և ստանալ հարկային մարմնի կողմից ուղարկված ծանուցումներ:

Համակարգի ենթաբաժիններն են՝

- Անհատական տվյալներ
- Դիմում
- Սոցիալական վճարներ
- Ծանուցումներ
- Վճարման անդորրագրեր:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ - առցանց ռեժիմում, ինքնաշխատ տեղեկատվության փոխանակման հնարավորության ստեղծում:

Համակարգի ենթաբաժիններն են՝

- ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի և ՀՀ ՊԵԿ-ի միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ հարկ վճարողների գրանցում և տվյալների թարմացում:
- ՀՀ Կենտրոնական Բանկի և ՀՀ ՊԵԿ միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ հարկ վճարողների գրանցում և տվյալների թարմացում:
- ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական համակարգից վճարումների մասին տվյալների տրամադրման համակարգ:
- ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական համակարգին ըստ հարկատեսակների մարված վճարումների տրամադրման համակարգ:
- ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետարանին եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի շրջանակներում սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համակարգ:
- Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիային եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի շրջանակներում սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համակարգ:
- Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայից եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի շրջանակներում համակարգին կամավորության սկզբունքով միացած, ինչպես նաև այդ համակարգից դուրս գրված և կենսաթոշակային տարիքը լրացած ֆիզիկական անձանց մասին անձնավորված տեղեկության տրամադրման համակարգ:
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) կողմից կազմավորվող բնակչության պետական ռեգիստրի շտեմարանից տվյալների ինքնաշխատ տրամադրման համակարգ (ԷԿԵՆԳ ՓԲԸ):

- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Սոցիալական ապահովության պետական ծառայությանը եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի շրջանակներում վճարների, ինչպես նաև դրանք մարելու մասին անձնավորված տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ՀՀ Ֆինանսների նախարարությանը հարկային հաշիվների մասով տեղեկության տրամադրման համակարգ:
- ՀՀ բանկերի կողմից հարկային մարմին հարկ վճարողների հաշիվների բացման/փակման մասին տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ԵՏՄ (Եվրասիական տնտեսական միության) երկրներից ներկրման և արտահանման գործարքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համակարգ:
- «Հարկատու 3» և «Վերո» համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման համակարգ:
- ՀՀ Բարձրաստիճան Պաշտոնատար Անձանց Էթիկայի Հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ԷԿԵՆԳ ՓԲԸ համակարգի և ՀՀ ՊԵԿ համակարգի միջև էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման համակարգ:
- ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ԱՔՌԱ-ին հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվետվությունների և պարտավորությունների մասով տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ՀՀ կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվության տրամադրման համակարգ:
- ՀՀ Ոստիկանությունից ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համակարգ (ԷԿԵՆԳ ՓԲԸ):
- Ստուգումներ իրականացնող մարմինների կողմից տվյալների ստացում:
- Օդային ուղևորների վերաբերյալ տեղեկատվության ստացում:
- ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ՊԵԿ-ի միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ էլեկտրոնային կարգով վճարումների իրականացում:
- «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի և ՀՀ ՊԵԿ-ի միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ էլեկտրոնային կարգով վճարումների իրականացում:
- ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ՊԵԿ-ի միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ արգելադրման գործընթացի իրականացում:
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և ՀՀ ՊԵԿ-ի միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ էլեկտրոնային կարգով վճարումների իրականացում:
- ՀՀ ՊԵԿ-ի և ՀՀ Ոստիկանության միջև տեղեկության փոխանակման համակարգ՝ արգելադրման գործընթացի իրականացում:
- ՀՀ ՊԵԿ-ի և ՀՀ կադաստրի պետական կոմիտեի միջև տեղեկատվության փոխանակման համակարգ՝ արգելադրման գործընթացի իրականացում:
- ՀՀ ՊԵԿ-ի և առևտրային ծրագրերի հետ տվյալների փոխանակում՝ «Վիրտուալ ՀԴՄ»:
-

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- ՀԴՄ կտրոններով, ՀՓ-երով (հաշվարկային փաստաթղթեր) և Եկամտային հարկի հայտարարագրման և աշխատողների ձևակերպման գործարքների մոնիտորինգի համակարգ:
- Ռիսկային հարկ վճարողներին ծանուցումների ուղարկման և ծանուցումների պարզաբանման ենթահամակարգ:
- Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում դերերի կառավարման ենթահամակարգ:
- ՀՀ ՊԵԿ մոնիտորինգի համակարգի համար տվյալների նախնական մշակման և տրամադրման համակարգ:
- Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր կայք համակարգ:
- «Հարկատու 3» համակարգի պարբերական տվյալների մշակման և գրանցումների ենթահամակարգ:
- «Հարկատու 3» համակարգի ադմինիստրավորման ենթահամակարգ:
- Առևտրային բանկերի կողմից հարկ վճարողների ֆինանսական հոսքերի ստուգման ենթահամակարգ:
-

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Ինտերֆեյսի փոփոխություններ առկա բոլոր էջերում:
- Հաղորդագրությունների պատուհանների ստեղծում և փոփոխում:
- Իջեցվող ցանկերի (drop-down list), ցանկերի (list box) պարունակության փոփոխում:
- Ծրագրային փոփոխություններ, որոնք չեն ենթադրում նոր ենթահամակարգերի ներդրում
- Նոր ենթաբաժինների ներդրում, որոնք չեն ներառում երեք և ավելի ենթահամակարգերի/ենթաբաժինների հետ տրամաբանական ստուրգումներ:
- Տվյալների բազայում կիրառվող սկրիպտների (scripts/Job) փոփոխություն և նոր սկրիպտների (scripts/Job) մշակում:
- Նոր վեբ սերվիսների ստեղծում կամ գործող վեբ սերվիսների փոփոխում:
- Գործող հաշվետվական ձևերի պարամետրերի փոփոխություններ, որոնք չեն ներառում երեք և ավելի ենթահամակարգերի/ենթաբաժինների տրամաբանության փոփոխություն:
- Արտաբերվող ֆայլերի ֆորմատի փոփոխում (PDF, Excell, XML), կամ ավելացում տվյալների բազայում առկա տվյալների հիման վրա:
- Տեղեկատվական հաշվետվություններում փոփոխություններ:
- Տվյալների բազաների ոչ կառուցվածքային փոփոխություններ:
- Տվյալների բազայում բառարանների տեղեկությունների ավելացում:
- Համակարգերում նոր էջերի ստեղծում կամ առկա էջերի փոփոխություն տեղեկատվական բազաներում առկա տեղեկատվության արտացոլման նպատակով:
- Նոր փաստաթղթի ստեղծում, առանց մուտքագրվող տվյալների տրամաբանական ստուգումների:
- MF 2351 մակնիշի ՀԴՄ սարքերի ծրագրային ապահովման փոփոխություններ:
- Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգի ծրագրային ապահովման փոփոխություններ:
- <Իրավական վարույթներ> ենթահամակարգի շրջանակներում իրականացվող ծանուցումների համակարգի փոփոխություն՝
-

ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.01.2021 թվականին առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Կ-788-30.11.2020-ՏՀ-011/0 օրենքը /այսուհետ՝ Օրենք/, որով փոփոխվել են հարկ վճարողների էլեկտրոնային ծանուցումների հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով ծանուցմանը վերաբերող նոր ընթացակարգեր՝ իրավահարաբերություններ:

Ներկայումս կիրառվում է «Հարկատու 3» էլեկտրոնային համակարգի «Իրավական վարույթներ» ենթահամակարգը, ինչի շրջանակներում էլեկտրոնային եղանակով իրականացվում են չկատարված հարկային պարտավորությունների գանձման, ինչպես նաև արգելադրման և ծանուցման իրականացման հետ կապված գործընթացները:

Օրենքի ընդունման արդյունքում՝ անհրաժեշտ է «Հարկատու 3» էլեկտրոնային համակարգի «Իրավական վարույթներ» ենթահամակարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

- ✓ Փոփոխել պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի էլեկտրոնային ծանուցման եղանակը, մասնավորապես՝ էլեկտրոնային ծանուցումն իրականացնել հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով:
- ✓ Հարկ վճարողների ծանուցումն իրականացնել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը տեղադրելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

1) հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու անհնարինության,

2) հարկ վճարողի կողմից տեղադրելու օրվանից հետո 5 աշխատանքային օրյա ժամկետում իր անձնական էջ մուտք չգործելու դեպքերում:

Նախատեսված եղանակով ծանուցումներն իրականացնելու դեպքերում՝ հարկ վճարողին ծանուցել հարկային մարմնում առկա իր էլեկտրոնային փոստին:

Նախատեսել, որ՝

1) պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերին հարկ վճարողը համարվում է պատշաճ ծանուցված՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու պահին,

2) պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հարկ վճարողին ուղարկվող հաղորդագրությամբ,

3) պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու դեպքում՝ հարկ վճարողը համարվում է պատշաճ ծանուցված՝ այդ փաստաթղթերը կայքում տեղադրելու օրը.

4) պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերն ուժի մեջ են մտնում հարկ վճարողի կողմից նշված փաստաթղթերին պատշաճ ծանուցվելու հաջորդ օրը:

- Ստեղծել տվյալների մուտքագրման ենթահամակարգ՝ «Փաստացի գործունեության տեսակի և ֆիրմային անվանումների ամրագրում»

«Փաստացի գործունեության տեսակի և ֆիրմային անվանումների ամրագրում» նախատեսվում է «Հարկատու 3» համակարգում լրացուցիչ տեղեկությունների մուտքագրման և նկարների ներբեռնման հնարավորության ապահովում:

«Փաստացի գործունեության տեսակի և ֆիրմային անվանումների ամրագրում» ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

ա) «Հարկատու 3» համակարգում հարկային ծառայողների կողմից հարկ վճարողների փաստացի գործունեության տեսակների (նախապես հաստատված ցանկից ընտրելու միջոցով), ֆիրմային անվանումների գրանցելու (այդ թվում՝ յուրաքանչյուր հարկ վճարողի գծով մեկից ավելի), ինչպես նաև հարկ վճարողների գործունեության վերաբերյալ նկարների ներբեռնման հնարավորություն՝ պատմության պահպանմամբ (Logs):

բ) Գրանցված տվյալների փոփոխության (թարմացման) հնարավորություն՝ պատմության պահպանմամբ (Logs)

գ) Գրանցված տվյալներով որոնման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:

- Ստեղծել առկա տվյալների կառավարման ենթահամակարգ՝ «Գործունեության հասցեների նույնականացում»

«Գործունեության հասցեների նույնականացում» ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

ա) «Հարկատու 3» համակարգում արդեն իսկ արտացոլվող հաշվարկային փաստաթղթերում նշված հասցեների և հսկիչ դրամարկղային մեքենաների գրանցման հասցեների ինքնաշխատ ամփոփում, թարմացում, դրանց արտացոլում «Կառավարում» բաժնի «Հարկ վճարողի տվյալներ» ենթաբաժնում:

բ) Հասցեներով որոնման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:

Ծանոթություն՝

- ✓ ՀԴՄ սարքերի տեղակայման հասցեն նշվում է տվյալների արտածման պահին «Հարկատու 3» համակարգի «Կառավարում» բաժնի «ՀԴՄ-ներ» ենթաբաժնում արտացոլված «Գործող» կարգավիճակ ունեցող ՀԴՄ-ների հասցեներից (բացառելով տվյալ հարկ վճարողի կրկնվող հասցեները),
- ✓ Հաշիվ վավերագրերով արտացոլված հասցեն նշվում է տվյալների արտածման պահն ընդգրկող և անմիջապես նախորդող եռամսյակի ընթացքում հարկ վճարողի կողմից դուրս գրված արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ վավերագրերի «[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են» վանդակում նշված հասցեներից (բացառելով տվյալ հարկ վճարողի կրկնվող հասցեները),
- ✓ Տեղափոխման փաստաթղթերով արտացոլված հասցեն նշվում է պահն ընդգրկող և անմիջապես նախորդող եռամսյակի ընթացքում հարկ վճարողի կողմից տեղափոխման փաստաթղթերի «[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են» վանդակում նշված հասցեներից (բացառելով տվյալ հարկ վճարողի կրկնվող հասցեները),
- ✓ Հարկային հաշիվներով արտացոլված հասցեն նշվում է տվյալների արտածման պահն ընդգրկող և անմիջապես նախորդող եռամսյակի ընթացքում հարկ վճարողի կողմից դուրս գրված ապրանքների հարկային հաշիվների «[13] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են» վանդակում նշված հասցեներից (բացառելով տվյալ հարկ վճարողի կրկնվող հասցեները):

- Ստեղծել առկա տվյալների կառավարման ենթահամակարգ՝ «Փաստացի գործունեություն չիրականացնող հարկ վճարող»

«Փաստացի գործունեություն չիրականացնող հարկ վճարող» ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

ա) «Հարկատու 3» համակարգում արդեն իսկ արտացոլվող առանձին տվյալների համադրման

ժամանակահատվածը մեկ թարմացում, ենթակարգավիճակների արտացոլում «Կառավարում» բաժնի «Հարկ վճարողի տվյալներ» ենթաբաժնում:

բ) Ըստ ենթակարգավիճակների որոնման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:

Ծանոթություն՝

1) Հարկ վճարողը ինքնաշխատ եղանակով կստանա «Պասիվ» ենթակարգավիճակը, եթե յուրաքանչյուր ամսվա 5-ին նախորդող 12 ամսյա ժամանակահատվածում (ստորև նշված պայմանների միաժամանակյա բավարարում).

- ✓ Չունի Էլեկտրոնային եղանակով ներկայացված որևէ հարկային հաշվարկ կամ այլ փաստաթուղթ,
- ✓ Չունի միասնական հաշվին կամ այլ հաշիվներին (պետական տուրքի) կատարված վճարումներ,
- ✓ Չունի արտաքին տնտեսական գործունեություն (ներմուծում, արտահանում և այլն),
- ✓ Չունի դուրս գրված և (կամ) ստացված հարկային հաշիվներ կամ հաշիվ վավերագրեր,
- ✓ Չունի դուրս գրված տեղափոխման փաստաթղթեր,
- ✓ Չունի գրանցված աշխատող (գրանցման հայտերի առկայության դեպքում՝ բոլոր աշխատողները ազատված են)
- ✓ Չունի «նոր սերնդի» ՀԴՄ-ով տպված կտրոն:

2) Հարկ վճարողը ինքնաշխատ եղանակով կստանա «Մասնակի ակտիվ» ենթակարգավիճակը, եթե յուրաքանչյուր ամսվա 5-ին նախորդող 12 ամսյա ժամանակահատվածում (ստորև նշված պայմանների միաժամանակյա բավարարում).

- ✓ Չունի Էլեկտրոնային եղանակով ներկայացված որևէ հարկային հաշվարկ,
- ✓ Չունի միասնական հաշվին կամ այլ հաշիվներին (պետական տուրքի) կատարված վճարումներ,
- ✓ Չունի արտաքին տնտեսական գործունեություն (ներմուծում, արտահանում և այլն),
- ✓ Չունի դուրս գրված հարկային հաշիվներ կամ հաշիվ վավերագրեր և (կամ) ունի բացառապես ստացված բիլինգային հաշիվներ,
- ✓ Չունի դուրս գրված տեղափոխման փաստաթղթեր,
- ✓ Չունի գրանցված աշխատող (գրանցման հայտերի առկայության դեպքում՝ բոլոր աշխատողները ազատված են)
- ✓ Չունի «նոր սերնդի» ՀԴՄ-ով տպված կտրոն:

3) Հարկ վճարողը կստանա ինքնաշխատ եղանակով «Ակտիվ» ենթակարգավիճակը, եթե յուրաքանչյուր ամսվա 5-ին նախորդող 12 ամսյա ժամանակահատվածում ունի սույն ծանոթության 2-րդ կետում նշված տվյալներից կամ փաստաթղթերից առնվազն 1-ը:

- Ստեղծել առկա տվյալների կառավարման ենթահամակարգ՝ «Փաստացի չգործող հսկիչ դրամակղային մեքենա»
-

«Փաստացի չգործող հսկիչ դրամակղային մեքենա» ենթահամակարգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

ա) «Հարկատու 3» համակարգում արդեն իսկ արտացոլվող առանձին տվյալների համադրման արդյունքում հարկ վճարողների հսկիչ դրամարկղային մեքենաներին ենթակարգավիճակների տրամադրում, որոշակի ժամանակահատվածը մեկ թարմացում, ենթակարգավիճակների արտացոլում «Կառավարում» բաժնի «ՀԴՄ-ներ» ենթաբաժնում բաժնում:

բ) Ըստ հսկիչ դրամարկղային մեքենաների ենթակարգավիճակների որոնման և Excel ձևաչափով արտածման հնարավորություն:

Ծանոթություն՝

1) «Նոր սերնդի» ՀԴՄ-ն ինքնաշխատ եղանակով կստանա «Ակտիվ» ենթակարգավիճակը, եթե յուրաքանչյուր ամսվա 5-ին նախորդող 1 ամսյա ժամանակահատվածում տվյալ սարքով տպվել է 1-ից ավելի կտրոն (անկախ գումարի չափից), կամ՝ 100 դրամ արժեքից բարձր գումար (անկախ կտրոնների քանակից), իսկ հակառակ դեպքում՝ «Պասիվ» ենթակարգավիճակը:

2) «Հին սերնդի» բոլոր ՀԴՄ-ներին տրվում է «Պասիվ» ենթակարգավիճակը՝ անկախ վերջիններիս փաստացի գործելու հանգամանքից

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 2

Ապահովել ՀՀ ՊԵԿ-ի «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական և թեստային սերվերների սպասարկումը, ներառելով հետևյալ գործառույթները.

- «Հարկատու 3», «Հաշվետվությունների Ներկայացման Էլեկտրոնային Համակարգ» (ՀՆԷՀ), «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ», ՀԴՄ-ներ (Հսկիչ դրամարկղային մեքենաներ) «Զանգերի կենտրոն», «Մոնիտորինգի կենտրոն» համակարգերում կիրառվող տվյալների շտեմարանների կառավարում, վերջիններիս սարքաշարերի (hardware environment) սպասարկում և ծրագրային ապահովման տեղադրում, մշտադիտարկում, պահուստային կրկնօրինակում, սպասարկում, ինչպես նաև վերջիններիս հետագա զարգացման (further development) ապահովում:
- «Հարկատու 3», «Հաշվետվությունների Ներկայացման Էլեկտրոնային Համակարգ» (ՀՆԷՀ), «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ», ՀԴՄ-ներ (Հսկիչ դրամարկղային մեքենաներ), «Զանգերի կենտրոն», «Մոնիտորինգի կենտրոն» համակարգերի շահագործում, այդ թվում սարքաշարերի սպասարկում և ծրագրային ապահովման տեղադրում, մշտադիտարկում, սպասարկում և հետագա զարգացման ապահովում:
- Տվյալների շտեմարանների, սերվերային և ցանցային սարքավորումների ծրագրային կարգավորումների (configuration) ինչպես նաև «Հարկատու 3», «Հաշվետվությունների Ներկայացման Էլեկտրոնային Համակարգ» (ՀՆԷՀ), «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ», ՀԴՄ-ներ (Հսկիչ դրամարկղային մեքենաներ) «Զանգերի կենտրոն», «Մոնիտորինգի կենտրոն» համակարգերի ֆայլերի պահպանման համակարգերի (file storage) արխիվացում և պահեստային կրկնօրինակում:
- «Հարկատու 3», «Հաշվետվությունների Ներկայացման Էլեկտրոնային Համակարգ» (ՀՆԷՀ), «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ», ՀԴՄ-ներ համակարգերի տվյալների շտեմարանների առնվազն 6 ամսվա աուդիտի ապահովվում SS վարչության կողմից ներկայացված չափանիշներով:
- Տվյալների շտեմարանների ժամանակին թարմացում մինչև հնարավորին վերջին տարբերակը (patchset, patchset update):
- Համակարգերի հիմնական և թեստային միջավայրերի օպերացիոն (root) և տվյալների շտեմարանների sys և system օտվողների (account), ինչպես նաև տվյալների մշակման կենտրոնների սարքավորումների օգտատիրոջ գաղտնաբառերի ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությանը (այսուհետ՝ SS) տրամադրում առձեռն՝ փակ ծրարներով, ամեն փոփոխությունից հետո:
- Համակարգի հիմնական տվյալների շտեմարանների (live) և պահուստային տվյալների շտեմարանների (warehouse) օգտատիրոջ գաղտնաբառերի ՀՀ ՊԵԿ SS վարչությանը տրամադրում առձեռն՝ փակ ծրարներով, ամեն փոփոխությունից հետո:
- Համակարգերի հիմնական և թեստային միջավայրերի շտեմարաններ և օպերացիոն համակարգեր անվանական, անհատական օգտատերի (account) միջոցով մուտքի ապահովում, բոլոր գործողությունների լոգավորում, լոգավորման գրանցումների պահպանում պայմանագրի կատարման ընթացքում:
- Համակարգի հիմնական տվյալների շտեմարաններից (live) և պահուստային տվյալների շտեմարանների (warehouse) օգտվողների կողմից կատարված բոլոր գործողությունների լոգավորում առնվազն 6 ամիս պահպանման ժամկետով
- ՀՀ ՊԵԿ SS վարչության կողմից նշված աշխատակիցները, ունենալով ադմինիստրատիվ իրավունքներ, չեն իրականացնելու ոչ մի փոփոխություն օպերացիոն համակարգերի, տվյալների շտեմարանների և որևէ սարքավորման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողություններիը նախօրոք համաձանեցված կլինեն սպասարկող կազմակերպության հետ:
- Սերվերներում տեղադրված էլեկտրոնային համակարգի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական և ըստ անհրաժեշտության (օրինակ՝ անվտանգության թարմացումներ) վերաթարմացում:
- Սերվերներում տեղադրված օպերացիոն համակարգերի ժամանակին թարմացում մինչև հնարավորին վերջին տարբերակը:
- Սերվերների հսկում (մոնիտորինգ) և առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում:
- Նոր սերվերների կոնֆիգուրացում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում առկա սերվերների միջև:

- Սերվերներում պարունակվող տեղեկատվության մոնիտորինգ, ամբողջականության և անվտանգության ապահովում, արխիվացում:
- Առնվազն շաբաթական մեկ անգամյա ամբողջական շտեմարանի պահուստային կրկնօրինակում (back up), և օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որոնք պետք է պահպանվեն առնվազն 14 օր: «Հաշվետվությունների ներկայացման Էլեկտրոնային համակարգ»-ի, «Հարկային հաշիվներ համակարգ»-ի և «Էլեկտրոնային գրքեր համակարգ»-ի տվյալների օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որը պետքե պահպանվի առնվազն 14 օր: Վերոնշյալ (back up) ընթացակարգը կարող է փոփոխվել պատվիրատուի պահանջով:
- Համապատասխան գործառույթների կիրառում, որոնք կապահովվեն ՀՀ ՊԵԿ-ին տեղեկատվության հասանելիությունը միայն ՀՀ ՊԵԿ-ի ղեկավարության կողմից սահմանված անձանց: Մասնավորապես՝ ՀՀ ՊԵԿ-ի տեղեկատվության պահպանում սերվերների վրա, որոնք TCP ծառայությունների համար ուղղակիորեն հասանելի չլինեն ինտերնետից, գտնվեն փակ ցանցում DMZ և տարանջատվեն հրեպատի միջոցով (firewall):
- Համապատասխան գործառույթների կիրառում, որպեսզի սերվերների հասանելիությունը իրականացվի իսկության ստուգումով, ինչը ենթադրում է՝
    - Բոլոր սերվերների և հրեպատերի (firewall) ադմինիստրատիվ մուտքը լինի անվտանգ՝ ներքին ցանցի միջոցով:
    - Հեռաաշխատանքը կազմաձևել այնպես, որ ներքին ցանց մտնելիս ստուգվի ադմինիստրատորի իսկությունը, այնուհետև ցանցի ներսում տրվի մուտք դեպի սերվերներ և հրեպատեր:
    - Արգելվի ուղղակի մուտքը հրեպատին կամ սերվերին:
    - Արգելվում է ներքին ինտերնետային պրոտոկոլ (IP) հասցեների ուղղորդումը երթուղիչի միջոցով դեպի ինտերնետ և նշված IP հասցեներին բաց տեսքով հասանելիությունը:
    - Համակարգի կողմից օգտագործողի նույնականացուցիչի և մուտքի գործընթացների բաց տեքստով փոխանցման արգելում ներքին կամ արտաքին ցանցերում:
- Բոլոր բացառությունների, միջադեպերի, խափանումների, ադմինիստրատորների գործողությունների և ահազանգերի գրանցում տեղեկամատյաններում (log): Ըստ ՀՀ ՊԵԿ պահանջի տեղեկամատյանների տրամադրում:
- Համակարգերը սպասարկող սերվերների ցանցային կառուցվածքի տոպոլոգիայի (network topology) փոփոխությունների մասին տեղեկատվության տրամադրում:
- Ցանցային տրաֆիկի ամբողջականության և գաղտնիության ապահովում:

Ծառայություն 2 բաժնի «Մոնիտորինգի կենտրոն» համակարգի սպասարկումը նախատեսում է՝

Տեխնիկական մասով՝

1. Մոնիտորինգի կենտրոնի սերվերների օպերացիոն համակարգի սպասարկում և անվտանգության թարմացումների իրականացում

2. Մոնիտորինգի կենտրոնի սերվերներում գործող համակարգերի անխափան աշխատանքի ապահովում:

Վերլուծական մասով՝

ՀՀ ՊԵԿ Նախագահի հրամաններով հաստատված հարկ վճարողների ռիսկայնության գնահատման չափանիշներով ռիսկային հարկ վճարողների ձևավորման համակարգերի սպասարկում և փոփոխությունների իրականացում:

Ծառայություն 2 բաժնի Սարքաշարերի և նրանց բաղկացուցիչ մասերի մեխանիկական/ֆիզիկական վնասվածքների շտկումը չի մտնում սպասարկման աշխատանքների շրջանակի մեջ: Նման խնդիրների առկայության դեպքում Կատարողը անմիջապես տեղեկացնում է պատվիրատուին:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ ՊԵԿ համակարգերի տեխնիկական սպասարկման թեժ գիծ հարկ վճարողների համար, աշխատանքի հետևյալ պայմաններով՝
    1. միաժամանակ առնվազն 2 գծով զանգերի ընդունման հնարավորություն,
    2. զանգերի և պատասխանների ձայնագրում,
    3. պատվիրատուի համար զանգերի և պատասխանների ձայնագրությունների

4. աշխատանքային ժամերը աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00,
5. հիմնական համակարգերի (Հարկատու-3, Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ, էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ, ՀԴՄ համակարգ), դրանց բաժինների և ենթաբաժինների օգտագործելու անհնարին լինելու դեպքերում, աշխատանքային ժամերի երկարաձգում՝ համակարգի չաշխատած ժամերի չափով:

- Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի և հեռախոսազանգերի կառավարման և հաշվետվողականության ծրագրի սպասարկում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:
- Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը:
- Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.
    1. Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:
    2. Ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:
    3. Ծրագրային կոդը կպարունակի ողջ տեղեկատվությունը՝ ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:
    4.

Ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերի պատրաստումը և տրամադրումը առկա համակարգերի համար չի նախատեսվում, սակայն ցանկացած լրամշակումից հետո 30 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին պետք է տրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ի կողմից կատարողի հետ կնքվելու է երկկողմանի պայմանագիր:**
2. **Կատարողի հետ նախատեսվում է կնքել «Սպասարկման գործընթացի մասին համաձայնագիր» (Service level agreement), որով կկարգավորվեն բարձրացվող հարցերը:**

3. **Կատարողը տրամադրում է համակարգ (Project management software), որը հնարավորություն կընձեռի պատվիրատուին առցանց եղանակով ձևակերպել առաջադրանքներ և հետևալ դրանց կատարման ողջ ընթացքին:**
4. **Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:**

- ***Ծառայությունների մատուցման առավելագույն ընդհանուր գինը կազմում է 404 000 000 ՀՀ դրամ:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
«Ամերիա բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 00228737

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝

Տ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված-2
Հաստատված է
«18» հունվարի 2021թ. կնքված
N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/4
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4232	72261160/526	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայություններ		29 118 400	29 118 400	132 710 600	132 710 600	132 710 600	255 737 900	255 737 900	255 737 900	404 000 000	404 000 000	404 000 000	**404 000 000**

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության պողոտա 24/1
«Ամերիա բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570069343740100
ՀՎՀՀ 00228737

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝

Տ.Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ